Արձանագրություն N 2
«ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Արշակունյաց 135 **«10» «11» 2021թ**
ժ.15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Պետրոսյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Խաչատրյան (գնահատող), Գ. Սարգսյան (գնահատող),
Ա.Շադյան, (բացող) Ն.Սաֆարյան (բացող)
Հանձնաժողովի քարտուղար՝ Նաիրա Մկրտչյանը

1. **Տեղեկություններ «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին**

(Հ.Պետրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 15:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

«ԱՐՄ-ԱԷՐՈ» ՓԲԸ կարիքների համար «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

1	«Մաքս Օիլ» ՍՊԸ	-	ք. Երևան, Տպագրիչների 8, ՀՎՀՀ 02662703, էլ. հասցե՝maxoil.llc@mail.ru

Որոշում թիվ 1.

Հրավերով սահմանված՝մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին**

2.1 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՀՀ դրամ

	Մասնակից	Նախահաշվային գին	«Մաքս Օիլ» ՍՊԸ		
N	Ապրանքի անվանումը		արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
1					
1	Ավիացիոն կերոսին	14896000	13 277 833,33	2 655 566,67	15 933 400

2.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

(Հ.Պետրոսյան)

3.1 «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և ներկայացված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում (Հավելված 1.3), մասնավորապես.

1. «Մաքս Օիլ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1.1-ում՝ ապրանքի ամբողջական նկարագրում լրացված չէ ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը;
2. «Մաքս Օիլ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտում (Հավելված 1.3) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում (Հավելված 1.3) լրացված չէ 4.5.2, 4.7 և 4.8.2 կետերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 05.11.2021թ. հանձնարարել ընթացակարգի քարտուղարին անհամապատասխանությունների շտկման ծանուցում ուղարկել «Մաքս Օիլ» ՍՊԸ–ին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

3.3 «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի, կողմից սահմանված ժամկետում շտկվել են անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակից կազմակերպությունների հայտերը գնահատվել են բավարար և հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4 <u>Տեղեկություն ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցներին բանակցություններին մասնակցելու հրավերի մասին</u>

(Հ.Պետրոսյան)

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել հարձնաժողովի նիստը և հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտ ներկայացրած 1-ին չափաբաժնի մասով գնային առաջարկի նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա բանակցությունների սույն թվականի նոյեմբերի 10-ին ժամը 12:00-ին ք.Երևան Արշակունյաց 135 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

4.2 Բանակցությունների համար սահմանված ժամին 2021թ. նոյեմբերի 10-ին բանակցությունների ներկայացել է «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը՝ (տնօրեն) Կ. Մելքոնյանը:

4.3 Բանակցությունների ընթացքում է «Մաքս Օիլ» ՍՊԸ -ի ներկայացուցչի կողմից գնային առաջարկի նվազեցում չի կատարվել:

4.4 ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերությամբ որոշեց «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի մասով հիմք ընդունել ներկայացված գնային առաջարկը, պայմանով, որ «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրով կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

4.5 Հանձնաժողովը որոշեց «Արմ-Աէրո-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մաքս Օիլ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

5. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ.Պետրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 4.4-րդ կետով ընդունված որոշումը ինչպես նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը «Արմ-Աէրո-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Մաքս Օիլ» ՍՊԸ -ին:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չէ սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել թվով մեկ մասնակից:

Ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝

Հ.Պետրոսյան _____

Անդամներ՝

Ն. Խաչատրյան _____

Գ. Սարգսյան _____

Ա.Շադյան _____

Ն.Սաֆարյան _____

Քարտուղար՝

Ն.Մկրտչյան _____